

ՍՈՒՏ ԿԸ ԽՕՄԻՄ

Այս կանոնը կը գրեմք անոնց համար, որոնք անաստուածաբար սուտ վկայութիւն կու տան: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքին մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր»: (Ելք. Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:

Առաջին՝ ահեղ ու սուկալի իրողութիւնը այն է, որ նշմարտութիւնը Աստուծոյ անունն է եւ ամէն բանի զարդն ու աշխարհի պայծառութիւնն է: Իսկ սուտ վկան անբիչ ու կործանիչ է նըշմարտութեան, որովհետեւ կը վկայէ ո՛չ իր տեսածին եւ ո՛չ ալ գիտցածին մասին:

Երկրորդ՝ ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմս չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը որ ծնաւ սուտը» (Յովհ. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօսները, եթէ ետ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանջանքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Սդ. Ե. 7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դուռն է, իսկ ստախօս բերանը դժոխքի դուռն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը նշմարտութեան վարժեցուցէ՛ք, որպէսզի Ս. Հոգին բնակի ձեր մէջ:

ՊՍԱԿԻ ՆԱՐՕՏՆԵՐ




Պսակի արարողութեան ընթացքին, փեսային եւ հարսին գլխուն դրուա կարմիր-կանաչ-ճերմակ ոլորուն երիզն է նարօտը, որուն ծայրը փոքր խաչ մը կայ, ինչ որ կը հանգչի պսակուող ամուլներու ճակատներուն:

Ներկայիս, որպէս նարօտ կը գործածուի բոլորակի շղթայ մը, որուն կեղորոնին գտնուող խաչէն շարափողուող չորս շղթաներ նարօտը կը պահեն փեսային եւ հարսին գլխուն, իսկ առջեւը գտնուող շրջանակուած գեղեցիկ երորդ խաչ մը կ'իջնէ պսակուողներու ճակտին:

ՀԱՄԱՅՔ

Հաւատք կը նշանակէ ամուր վստահութիւն: Կրօնական առումով կը նշանակէ հաստատ համոզում Աստուծոյ, Անոր արարչագործութեան եւ յայտնութիւններուն վրայ:



ԲՈՒ ԽՕՄԵՐ ԽՅ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՅ ԶԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 6 ՓԵՏՐՈՒԱՐ 2022

ԹԻԻ 6

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես.61.10-62.9: Բ.ՏՄ. 2.15-26 Յհ.6.15-21

ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՒՄ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 6.15-21

Յիսուս երբ գիտցաւ, թէ պիտի գան զինք բռնութեամբ թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները լիճին եզերքը իջան եւ նաւակ մտնելով՝ սկսան երթալ լիճին դիմացի կողմը, դէպի Կափառնատուն: Երբ մթնցաւ, տակալին Յիսուս իրենց չէր եկած: Լիճը զօրաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմէթր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ լիճին վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց.- «Ես եմ, մի՛ վախնաք»:

Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Պահեցողութեան առաքինութիւնը մեծապէս կարեւոր է մեր բնութեան համար եւ բազմաթիւ թերութիւններ խոնարհ պահեցողութեամբ կը սրբագրուին: Այդ իսկ պատճառով, երբ Աստուած մարդը ստեղծեց, անոր բնութիւնը խիստ պահեցողութեամբ օժտեց, եւ առաջին մարդուն որպէս առաջին պատուիրան խիստ պահեցողութիւնը պարտադրեց, որ է՝ արգիլուած ծառէն չճաշակել: Եթէ առաջին մարդը պահած ըլլար պահեցողութեան պատուիրանը, առաքինի, անմահ եւ անմեղ կեանք մը պիտի ժառանգէր եւ երկինքի մէջ ամէն տեսակի բարութիւններ պիտի վայելէր: Բոլոր անոնք, որ պահեցին խիստ պահեցողութիւնը, բազմաթիւ վիշտերէ փրկուեցան: (Յովհան Մանդակունի)

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՌԱՋԱԲՈՐԱՅ ՊԱՀՔ

Գրիգոր Լուսաւորիչի կողմէ սահմանուած առաջին պահքը կը կոչուի՝ Առաջաւորաց Պահք:

Գրիգոր Լուսաւորիչ, Խոր Վիրապէն ելլելէն ետք 65 օր քարոզեց աղօթքով, Կեանքի Խօսքի քարոզչութեամբ հայ ժողովուրդը պատրաստելու համար եւ վերջին հինգ օրերուն համար ծովանակեց ի յիշատակ Հայաստանի լուսաւորութեան: Այս սկզբունքով, Առաջաւորաց Պահքը համարուեցաւ հայոց առաջին ազգային պահքը:

Առաջաւորաց պահքի ժամանակ եկեղեցւոյ մէջ Գիրք կամ Աւետարան չեն կարդար եւ Պատարագ չի մատուցուիր, որովհետեւ Առաջաւորաց Պահքի մէջ խորհրդաբար Ադամի անկումը կը յիշատակուի: Ադամի ժամանակ «Գիրք եւ Մարգարէք» գոյութիւն չունէին: Ուրբաթ օրը կը կարդացուի Յովնանու մարգարէութիւնը՝ Նինուէի փրկութեան համար:

Առաջաւորաց Պահքի Շաբաթ օրը՝ Ս. Սարգիս գորավարի յիշատակն է: Ումանք, Առաջաւորաց Պահքը կը շփոթեն Ս. Սարգիսի տօնին հետ եւ թիրիմացաբար կը կոչեն Ս. Սարգիսի պահք: Եկեղեցական օրէնքով սուրբերը պահքի օրեր չունին, հետեւաբար՝ Ս. Սարգիս եւս պահք չունի:

Հաւատքով լեցուն ծումապահութիւն կը մաղթենք բոլոր անոնց, որոնք Առաջաւորաց Պահքի առիթով ծումապահութիւն կը կատարեն, կ'աղօթենք առ Աստուած եւ կը խնդրենք հաւատքի զօրութիւն եւ մեղքերու թողութիւն:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս ի՞նչ ըսաւ ծումապահութեան մասին:

Յիսուս Քրիստոս իր քառասունօրեայ ծումապահութեամբ ցոյց տուաւ, թէ պահեցողութիւնը անհրաժեշտ է հոգեւորապէս գորանալու եւ սատանայի որոգայթներուն դէմ դնելու համար: Իսկ լեբան Քարոզի ընթացքին պատուիրեց ըսելով. «Երբ ծով պահէք, կեղծաւորներու պէս տրտմած մի՛ ըլլաք, որոնք կ'աւրեն իրենց երեսը, որպէսզի մարդոց ցոյց տան, թէ ծով կը պահեն: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այն է անոնց վարձքը: Սակայն դուն երբ ծով պահես, օժէ՛ գլուխդ եւ լուս' երեսդ, որպէսզի մարդոց պահեցողի պէս չերեւիս, այլ՝ Հօրդ ծածկապէս եւ Հայրդ, որ կը տեսնէ ծածուկը՝ պիտի հատուցանէ քեզի»: (Մատթ. 2. 16-18):

Առաքեալներն ալ ծով կը պահէին: «Գործք Առաքելոց» գիրքէն եւ առաքելական թուղթերէն կ'իմանանք, թէ անոնք յաճախ ծումապահութեամբ կ'աղօթէին, իրենց մարմինը կ'ընկնէին ու հսկումներ կը կատարէին հոգեւորապէս գորանալու եւ Սուրբ Հոգւոյն շնորհներուն արժանանալու համար:

Պօղոս Առաքեալ իր թուղթերուն մէջ կը յիշէ, թէ ինք ծումապահութիւն եւ հսկում կը կատարէ:

ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍՔ

Ինծի եկեք դուք բոլորդ, յոգնածներ ու բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի: Ձեր վրայ առեք իմ լուծս եւ ինձմէ սորվեցեք, որովհետեւ հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ դուք ձեր հոգեկան հանգըստութիւնը պիտի գտնեք, քանի իմ լուծս դիւրաւ տանելի է, եւ բեռս՝ թեթեւ: (Մտթ. 11.28-30)

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՉԱՎՆԿԱԼԵՆՔ ՀՐԱՇՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒԻԼ

Յիսուս երկու առիթներով հրաշքով կերակրեց ժողովուրդը: Առաջին անգամ, հինգ հացով եւ երկու ձուկով կերակրեց աւելի քան հինգ հազար հոգի (Մտ. 15.17-21), իսկ երկրորդ անգամ, եօթը հացով եւ քանի մը մանր ձուկերով կերակրեց աւելի քան չորս հազար հոգի (Մտ. 15.34-38): Ինչո՞ւ Յիսուս միշտ հրաշքով չկերակրեց մարդիկը, այլ՝ միայն երկու անգամ: Յովհանն Ոսկեբերան կը հաստատէ, որ Յիսուս չուզեց միշտ հրաշքով կերակրել մարդիկը, նախ որպէսզի անոնք իրենց փորին ստրուկները չդառնային եւ երկրորդ, որպէսզի աւելի հոգեւոր իրականութեանց հետամուտ ըլլային:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Քրիստոս հրաշքով չի կերակրեր իր հետեւորդները, որպէսզի իրեն դիմողները միայն նիւթական հացի համար չդիմեն եւ որպէսզի մարդիկ չսպասեն, որ Քրիստոս հրաշալի միջոցներով իրենց պէտքերը գոհացնէ: Մարդիկ պէտք է սորվին իրենց ճակտի քրտինքով վաստկիլ իրենց օրուայ ապրուստը:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՅԷ ԿՈՒՉԵՍ ԳԻՏԵԱԿԱՆ ԱՆՎՈՒՄՆԱԲՐՈՒԹԵԱՆ ԷՈՐԹԻՒՆԸ, ԱՆՈՐ ԱՐԱՍԸ ԵՂՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՎԱՍՃԱՆԸ, Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 53

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին.- «Աստուած չկայ», ուստի ապականեցան, եւ զգուցեցան մեղքեր գործեցին: Չկայ մէկը, որ բարին գործէ: Աստուած երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար, թէ կա՞յ իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Անէնքն ալ մոլորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան: Չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ոչ իսկ մէկ հոգի: Երբեք խելքի պիտի չգա՞ն անոնք՝ որոնք չարիք կը գործեն, անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուսեն հացի պէս, եւ Աստուծոյ չեն աղօթեր: Բայց յանկարծակի ահ ու դողի պիտի մատնուին, ահ ու դողի մը, որուն նմանը չէ եղած երբեք. որովհետեւ Աստուած ցիր ու ցան պիտի ընէ քեզ պաշարողներուն ոսկորները, եւ դուն զանոնք ամօթահար պիտի ձգես, որովհետեւ Աստուած մերժեց զանոնք: Ոհ, տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍԷՆ ԱՂՕԹԵՅԷՔ